մի գիրք, առաջ հարկաւոր է իմանալ նրա տպագրուած տարին գոնէ։ Րոստանի «Արծուիկը» լոյս է տեսել 1900 թուին, իսկ «Ասլի»-ն գրուած և տպուած է (Արձագանքում) 1896 թուին, այսինքն «Արծուիկ»-ից 4 տարի առաջ։ Ո՞ւր մնաց նմանողութիւնը *)։

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

---

## ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1) «Ատրպատականի Հայոց հիմնական և Հայաստանեայց եկեղեցու ծխական կանոնադրութիւն», 1903 թ., Թաւրիզ, գ. 2 ղռ. (40 կ.)

2) Գ. Ղազարեանց՝ «Սիբիրախտ», առաջին ձրի յաւելուած «Առողջապահիկ Թերթի», 1904, Թիֆլիզ, գ. 7 կ.։

3) ? «Արդար ծերունին», 1904, Ս.-Պետերբուրգ, գ. 10 կ.։

4) Ատրպետ՝ «Երկերի ժողովածու», հ. VI, 1904, Թաւրիզ, գ. 1 ր.։

5) Գ. Ալթունեան՝ «Հայոց նախնական պատմութիւնը ըստ Մոմզէնի», 1904, Վաղարշապատ, գ. 25 կ.։

6) «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. V, «Հայ-քրդական վէպ», հաւաքեց Ս. Հայկունի, 1904, Մոսկուա-Վաղարշապատ, գ. 1 ր. 50 կ.։

7. Մակար եպիս. Բարխուդարեան՝ «Աստուածային հրահանգ հանրապարտուց», 1904, Թիֆլիզ, գ. 80 կ.։

8) Ա. Գեանջեցեան՝ «Պատկերներ», ա., 1904, Բագու, գ. 10 կ.։

9. Հ. Իբսէն՝ «Հասարակութեան նեցուկները», գերմ. թարգմ. Լ. Բաբայեան, VIII հրատ. «Հանրամատչելի գրադարանի Հ. Առաքելեանի», 1904, Թիֆլիս, գ. 50 կ.։

10) Ա. Մխիթարեան՝ «Դէպի Արարատ», VII հրատ. «Հանրամատչելի գրադարանի Հ. Առաքելեանի», 1904, Թիֆլիս, գ. 40 կ.։

11) Բժ. Ն. Տէր- Իսահակեան՝ «Խոլերա», 1904, Ալէքսանդրապօլ, գ. 3 կ.։

12) Գաբրիէլ Սունդուկեանց՝ «Խաթաբալա», կատակերգ., բ. տպ., 1904, Թիֆլիզ, գ. 50 կ.։

---

*) Եթէ մեզանում պ. պ. հրատարակիչները նեղութիւն կրէին միշտ նշանակել թէ իրանց հրատարակածն այսինչ հանդէսից քաղուած արտատպութիւն է — առաջ չէր գալ այս թիւրիմացութիւնը։ Անկարելի է պահանջել քննադատից որ նա յիշէ այս կամ այն հեղինակի զանազան ժամանակ զանազան հանդէսներում ցիրուցան լոյս տեսած գրուածքները։ Իսկ հրատարակիչները երևի մեծ մասամբ դիտմամբ չեն յիշատակում «արտատպութիւն» խօսքը. մի ագեղ սովորութիւն, որ պախարակել ենք «Մուրճ»-ում, բայց շարունակւում է գործադրուել. երևի առանձին շահ կայ այդպէս վարուելու մէջ...

Խմբ.